Քրիստոնյա Հայաստան

2025, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (669)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Ամանորի խորախորհուրդ այս երեկո հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ՝ ի հայրենիս և ի սփյուռս:

Դիմավորում ենք փրկչական 2025 թվականը: Մեր կյանքում առկա չփարատված մտահոգություններով ու հոգսերով հանդերձ՝ նոր տարի մուտք ենք գործում լավատեսությամբ և բարի սպասումներով: Ամանորի հուսառատ ապրումներն ընտանեկան մեր հարկերում են, եկեղեցիներում ու ծառայության վայրերում՝ ամենուր, որտեղ համախմբված ենք՝ միմյանց փոխանցելու մեր մաղթանքներն ու ջերմ զգացումները:

Ամանորն առիթ է ինքնաքննության, անդրադառնալու ազգային ու հայրենական մեր կյանքը հուզող խնդիրներին: Ամանորը հրավեր է նորոգության, հրավեր ապագայի շուրջ մտորումների, կյանքն առավել ապահով, բարօր ու շեն դարձնելու նախաձեռնությունների:

«Նորոգվեցեք ձեր մտքով և հոգով ու հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու՝ արդարությամբ և ճշմարիտ սրբությամբ» (Եփես. 4.23–24),– պատգամում է առաքյալը: Սուրբգրային այս հորդորին ունկնդիր՝ սիրո, բարության ու արդարության ճանապարհով ընթանալով՝ կարող կլինենք, սիրելինե՛ր, դիմակայել ծանր, անգամ անելանելի թվացող իրավիճակներին: Կարող կլինենք ուժ գտնել՝ նեղությունները համատեղ ջանքերով հաղթահարելու, փորձությունները փորձառության վերածելու, ձախողումներն ու պարտությունները ձեռքբերումների վերափոխելու և մեր նոր օրը կառուցելու՝ ապավինած առաքելական խոսքին, թե՝ «ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպ. 4. 13): Այս հաստատ համոզումով ենք պատմության ողջ ընթացքում մեր հարազատ բնօրրանում ապրել, մեր պետականությունը կերտել և օրհասական պահերին համձնառու ոգով համախմբվել՝ հանուն հայրենիքի հզորացման և ազգային տեսիլքների մարմնավորման: Մաքառել ու տոկացել ենք առ Տերը հույսով և առաքյալի խոսքի նկատմամբ հավատով, թե՝ նեղություն ունենք, բայց ընկճված չենք, կարոտյալ ենք, բայց հուսահատ չենք, հալածված ենք, բայց լքված չենք, չարչարված ենք, բայց կործանված չենք (հմմտ. Բ Կորնթ. 4. 8–9):



Արդ, մեր կյանքում ծառացած դժվարությունների հանդիման հարկ է աննկուն մնալ և առկա մարտահրավերների ու պարտադրվող պահանջների հանգուցալուծումը չփնտրել հայրենավնաս զիջումների, մեր սրբություններից ու ավանդական արժեքներից հրաժարման միջոցով: Աներեր մնանք մեր պատմությանն ու արժեհամակարգին հավատարմության մեջ, անխաթար պահպանենք մեր ինքնությունը, ինչը կարևոր է նոր սերնդի ոգու և գիտակցության կերտման, նաև աշխարհում մեր պետության և ժողովրդի հեղինակության ամրապնդման, ազգային իրավունքների պաշտպանության համար: Հավատում ենք, որ մեր պատմությունը զարդարվելու է նոր վերելքով: Լուսավոր գալիքի մեր ձգտումներում զինվենք հույսով և հավատով, Աստծուն ապավինած՝ իրագործենք յուրաքանչյուրս մեր առաքելությունը՝ ի սեր անձնական ու հավաքական մեր կյանքի բարօրության: Նորոգված կյանքով կարող պիտի լինենք կերտել նոր իրականություն, որտեղ գերակա կլինեն ուղղամտությունն ու համերաշխությունը, օրինահարգությունն ու հայրենանվիրումը, նոր իրականություն, որտեղ յուրաքանչյուր համձնառություն միտված կլինի մեր պետության հզորացմանը, ազգի անվտանգ ու արժանապատիվ կյանքի ապահովմանը, արցախահայության անօտարելի իրավունքների պաշտպանությանը: Այս տեսլականով վերափոխենք մեր կյանքի ընթացքը և միշտ քայլենք սիրո և միաբանության կենարար ճանապարհով:

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ, տարեմուտի սեմին աղոթենք առ Աստված մեր հայրենիքի, հայոց բանակի, հայրենի հողից ու տնից բռնությամբ զրկված արցախցիների, նահատակված զավակների կորուստը սգացող, գերեվարված և անհայտ կորած սիրելիների ցավով ապրող ընտանիքների, հիվանդների ու զրկանքների մեջ գտնվողների համար: Աղոթենք նաև աշխարհասփյուռ մեր քույրերի ու եղբայրների համար, որոնք կրում են պատերազմների կործանարար հետևանքները: Հայցենք խաղաղություն համայն աշխարհին, մեր հայրենիքին ու ժողովրդին: Թող Տերն օգնական ու զորակից լինի ազգիս հայոց՝ շնորհելով լուսառատ նոր հորիզոններ:

Շնորհավոր Նոր տարի: Բարի և օրհնյալ տարի:

31 դեկտեմբերի, 2024 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եկիր ի փրկութիւն ազգի մարդկան,
Թագաւոր փառաց, Քո անճառ խոնարհութեամբդ»:
(Շարական)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության լուսաշող տոնին, համախմբված մեր սուրբ եկեղեցիների կամարների ներքո, փառաբանում ենք Բարձրյալ Աստծուն, որ մարդկության հանդեպ անհուն սիրով ու ողորմությամբ ուղարկեց Իր Միածին Որդուն՝ ազատելու մարդ արարածին մեղքից ու մահվան կապանքներից: «Փառքի Թագավոր, Քո անճառ խոնարհությամբդ եկար մարդկության փրկության համար»,– օրհներգում է շարականագիրը:

Այսօր Սուրբ Ծննդյան հրաշազարդ իրադարձությունն է վերստին հառնում մեր հայացքի առջև: Երկնային բարձունքներում գահին բազմող Փառքի Թագավորը ծնվում է աղքատիկ մսուրում: Փրկչի Ծննդյան հրեշտակաձայն ավետիսին ունկնդիր՝ պարզասիրտ հովիվները խոնարհվում են Մանուկ Աստվածորդու առջև: Իմաստուն մոգերը երկրպագում են Փրկչին, Որ աստվածային խնամքով մարդկությանը առաջնորդում է դեպի բարիք, հաճություն ու համերաշխություն:

Աստվածորդու հրաշափառ Սուրբ Ծնունդն անճառելի խորհուրդ է՝ մտքին անհասանելի, բայց հավատքով ճանաչելի և ընկալելի: Փրկիչը խոնարհվեց և մարմին առավ՝ նյութականից դեպի հոգևորն ու աստվածայինը բարձրացնելու մարդկային սրտերն ու մտքերը: Անմահը մահկանացու դարձավ՝ ճշմարիտ կյանքի և հավիտենության ճանապարհը ցույց տալու մարդկությանը՝ համաձայն Իր խոսքի. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ. 14.6): Այսօր էլ բեթղեհեմյան պայծառափայլ աստղը փորձություններով խռովահույզ աշխարհում փրկության հույսի ճանապարհն է ուղենշում: Սուրբ Ծննդյան գիշերը վկայում է, որ անգամ նեղությունների խավարում փայլատակում է Աստծո լույսը, ծագում է Արդարության Արեգակը, ինչպես անվանվում է Քրիստոս շարականներում և մարգարեության մեջ (Մաղաք. 4.2):

Քրիստոսին ընդառաջ գնալը, Նրա պատվիրաններով ապրելը վեհացնում և զորացնում է անձերին ու ժողովուրդներին, արժանի դարձնում աստվածային պարգևների և օրհնությունների: Խանձարուրով պարուրված Աստվածորդուն ընդունելով՝ մարդը զգեստավորվում է փրկության շնորհով, որը հավատացյալի կյանքում բխեցնում է երկնառաք բարիքների աղբյուրը: Աստվածամերժ ընթացքները, սակայն, մարդկությանը կանգնեցնում են չարիքների և կործանարար սպառնալիքների առջև:

➥ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

➥ էջ 1

Այսօր ամենքս ականատես ենք Աստծուց հեռացող աշխարհի դառնագին իրականությանը՝ նյութականի պաշտամունք, քաղաքական ու տնտեսական շահեր, տիրապետելու մոլուցք, որոնց զոհաբերվում են անհատի և ժողովուրդների իրավունքները, բարոյականության սկզբունքները, համամարդկային խաղաղ համակեցությունը, երջանկությունն ու բարիքը: Այս արհավիրքների հետևանքով մարդկությունը հայտնվել է աղետալի իրողությունների առջև՝ պատերազմներ, զոհեր ու ավերածություններ, կարիքի ու դժվարությունների մեջ հասակ առնող որբացյալ և անօթևան երեխաներ, հակամարտությունների դաժան պայմաններում գոյատևող, գաղթական դարձած ընտանիքներ: Այսպիսի տագնապալի իրավիճակները հրամայական են դարձնում աշխարհի բարեփոխումն ու ժողովուրդների համերաշխ գոյակցությունը, որը մշտապես պատգամվում է մանուկ Աստվածորդու Սուրբ Ծննդյան՝ «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. 2.14) հրեշտակաձայն օրհներգությամբ:

Սիրելինե՛ր, աշխարհաքաղաքական ներկա բարդ իրադրության մեջ ծանր փորձությունների ենթարկվեց մեր ժողովուրդը. բռնազավթվեց և հայաթափվեց Արցախը, գրավված են մնում Հայաստանի ինքնիշխան տարածքներ, տակավին գերության մեջ են և անհայտ կորած մեր բազում զավակներ, Ադրբեջանի կողմից շարունակում են հնչեցվել նորանոր պահանջներ ու սպառնալիքներ: Այսօր մեր երկիրը խոովահույզ է ներքին խնդիրներով՝ կեղծիք, անօրինականություն, չարակամություն, քինախնդրություն, արատավոր երևույթներ, որոնք հասարակության մեջ պատճառ են դառնում անվստահության, անտարբերության, թշնամանքի ու պառակտումի և հանգեցնում ազգի տկարացման: Այս ամենին զուգընթաց քրիստոնեական բարոյական ընկալումների և ազգային-հոգևոր ավանդական արժեքների խեղաթյուրումը աղճատում է մեր ժողովրդի ինքնության դիմագիծը, թուլացնում ազգային ոգին, ներքաշում դեպի մեղքի, հուսահատության որոգայթներ: Սուրբ Ծննդյան խորհրդով մեզ վերստին երկնային հրավերն է ուղղվում՝ ընթանալու սիրո, հաշտության, արդարության տերունավանդ ճանապարհով: Այս կոչն իրագործելի է միայն քրիստոնեական կենսակերպով: Այս կոչն իրագործելի է, եթե անձնական բարեկեցությանն ու հարմարավետությանը չզոհաբերենք մեր ինքնությունը, ժողովրդի անվտանգությունն ու հայրենիքի բարօրությունը: Չենք կարող ծառայել համընդհանուր բարիքին՝ տրվելով փառասիրությանն ու իշխանատենչությանը և առաջնայնություն տալով սեփական շահերին: Մենք՝ որպես ազգ, լինի հայրենիքում թե սփյուռքում, կհաջողենք, եթե միշտ հավատարիմ մնանք Քրիստոսին, Նրա վարդապետությանը, ընթանանք Աստծո խոսքի և աստվածային կամքի համաձայն, ձերբազատվենք մոլորեցնող ու բաժանարար մարդկային նենգամտությունից:

Միաբանվե՛նք հանուն մեր պետության անսասանության և անվտանգության, Արցախից բռնի տեղահանված մեր քույրերի ու եղբայրների նկատմամբ արդարության վերականգնման, հանուն մեր ազգի ու հայրենիքի ապահով և բարօր հարատևության: Լինենք միմյանց գործակից և ոչ՝ հակառակորդ, լինենք նախանձախնդիր ծառայելու և ոչ՝ դիրքն ու հանգամանքը չարաշահելու մեջ: Տարագիր չդառնանք մեր երկրից, ապրենք ու արարենք մեր հարազատ բնօրրանում: Երեխաների նոր ծնունդով, արժանավոր զավակների դաստիարակությամբ հզորացնենք մեր ազգն ու հայրենիքը: Յուրաքանչյուրս մեր կարողության չափով ներդրում բերենք համազգային կյանքի առաջընթացին՝ ի պայծառություն մեր պետության և ի շահ մեր ժողովրդի լուսավոր գալիքի:

Սուրբ Ծննդյան ուրախալի ավետիսով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, մեր Սուրբ Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին: Մեր ողջույնն ենք հղում ի Քրիստոս Մեր հոգևոր եղբայրներին՝ քույր Եկեղեցիների Պետերին և հավատավոր իրենց հոտին: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Սուրբ Ծննդյան հոգենորոգ այս օրը միասնաբար աղոթք մատուցենք մարդեղացյալ Աստվածորդուն և հայցենք, որ առատ լինեն երկնահեղ օրհնությունները ազգային ու հայրենական մեր անդաստանում, հաստատուն մնան տերունավանդ հավատքը, հույսն ու սերը մեր կյանքում: Խնդրենք Երկնավոր Տիրոջ գորակցությունը մեծ կորուստներ կրած և հարազատ բնօրրանից զրկված արցախահայությանը: Խնդրենք Ամենակալից, որ խաղաղություն ու բարօրություն հաստատվի ողջ աշխարհում և հայրենի մեր երկրում: Թող Աստծո ամենախնամ Աջը և Սուրբ Ծննդյան կենարար շնորհները մշտապես հովանի լինեն համայն մեր ժողովրդին այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
Զեզ և մեզ մեծ աւետիս:

Սուրբ Ծննդյան Ճրագալույցի պատարագը Միածնաէջ Մայր տաճարում

Հունվարի 5-ին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության բերկրառատ տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց Ճրագալույցի սուրբ պատարագ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները, Արցախի նախագահ տիար Սամվել Շահրամանյանը, ԱՀ պետական այրեր և ուխտավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Մինչ սուրբ պատարագը կատարվեց Երեկոյան ժամերգություն, այնուհետև ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիելի մարգարեությունը:

Սուրբ պատարագի ընթացքում Վրթանես սրբազանը, իր քարոզում ներկայացնելով Տիրոջ Սուրբ Ծննդյան խորհուրդը, ի մասնավորի նշեց. «Ինչպես ամեն նոր մարդու ծնունդ կոչված է լինելու սիրո պտուղ, այնպես էլ Աստվածորդու ծնունդը մարդկության հանդեպ Աստծո գերագույն և անսակարկ սիրո զորավոր ապացույցն է: Քրիստոս Իր ծնունդով սկիզբ դրեց մարդկության փրկչագործությանը, որն իր կատարումին հասավ Տիրոջ խաչելության ու հրաշափառ Հարության խորհրդով:

Ամենակարող Աստված ընտրեց մարդեղության ճանապարհը. եկավ աշխարհ և մեզ հիշեցրեց, որ կոչված ենք դեպի երկինք, դեպի Իրեն գնալու, ու Իր կյանքով ցույց տվեց, թե ինչպիսին պետք է լինի այդ ընթացքը»:

Անդրադառնալով հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին, անվտանգային խնդիրներին, Արցախի կորստին՝ Վրթանես սրբազանը նշեց. «Սուրբ Ծննդյան մսուրի առաջ ծնկած՝ մենք աղոթում ենք մեր երկրի և պետականության անսասանության համար, այս պահին սահմանը հսկող մեր զինվորների համար, մեր նահատակ քաջորդիների հոգիների խաղաղության, անհայտ կորած և գերյալ մեր զավակների շուտափույթ վերադարձի համար»:

Պատարագիչ սրբազանը, խոսելով մանուկ Հիսուսի ծննդյամբ աշխարհին շնորհված խաղաղության մասին, ընդգծեց, որ աստվածային սկիզբը՝ հավերժ միավորված մարդկային բնության հետ, մարդուն վերադարձրեց հնարավորությունը՝ ապրելու Աստծո սիրո օրենքի համաձայն, գործելու հավատքով և հույսով նայելու ապագային.

աստվածային խաղաղությունը սիրո մարմնացյալ դրսևորումն է թե՛ ազգային, թե՛ հասարակական և թե՛ ընտանեկան կյանքում:

Վերջում պատարագիչ եպիսկոպոսը, աղոթք վերառաքելով առ Աստված, դիմեց ներկա հավատացյալներին՝ հորդորելով, որ Սուրբ Ծննդյան տոնախմբումը չլինի միայն սուրբգրային մի գեղեցիկ պատումի հիշատակում, այլ յուրաքանչյուրի սրտում ու հոգում ծնվի մանուկ Հիսուս. «Ամենքս այսօր մեզ հարցնենք. «Իսկ իմ սրտում ես ծնունդ տվե՞լ եմ սիրո գործերի, իմ հոգում տեղ պատրաստե՞լ եմ հավատի համար և իմ մտքում վա՞ռ եմ պահել արդյոք հույսի ջահը»: Միայն դրական պատասխանի դեպքում Հիսուսի Ծնունդը պիտի լուսավորի մեր կյանքը և մեզ համար դառնա իրապես Սուրբ Ծնունդ»:

Սուրբ պատարագի ավարտին՝ նախատոնակի արարողության ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Ավագ սուրբ խորան և վառեց Հիսուս Քրիստոսին խորհրդանշող մոմը, որից կենսատու լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց տարվա առաջին Տնօրհնեքը:

Հայրապետական սուրբ պատարագ Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնի առիթով

Հունվարի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնը: Տոնի առիթով համայն հայության հոգևոր կենտրոնում՝ Միածնաէջ Մայր տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուցեց սուրբ և անմահ պատարագ:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, քաղաքական-հասարակական գործիչներ և ուխտավոր հայորդիներ:

Հայրապետական խաչվառազարդ թափորը զանգերի ղողանջների ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից ամպհովանիով ուղեկցեց դեպի Մայր տաճար: Հայրապետական ամպհովանին կրում էին Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի ատենապետ Նարեկ Սարգսյանը, խորհրդի անդամներ Հովհաննես Սանամյանը, Աշոտ Մանասյանը և Ռուբեն Ազատյանը:

Սրբազան արարողությանը Հայոց Հովվապետին որպես առընթերականեր սպասավորում էին Գերաշնորհ Տ. Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը և Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Սուրբ պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» հրեշտակաբարբառ ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը և տոնի առիթով հղեց իր պատգամը:

Հավարտ սուրբ պատարագի՝ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը: Սուրբգրային ընթերցումներից, ջրօրհնյաց շարականների երգեցողությունից և Բարսեղ Մեծի աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով և սրբալույս մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն էր ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը:

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան փրկարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն

Հունվարի 7-ին՝ Սուրբ Ծննդյան տոնին հաջորդող մեռելոց հիշատակության օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը եպիսկոպոսաց և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայրենիքի իրենց կյանքն ընծայաբերած քաջորդիների հիշատակին և աղոթելու նրանց հոգիների հանգստության ու խաղաղության համար: Ծաղկեպսակի զետեղումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի պաշտոնեությանը

Հունվարի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով հանդիպում ունեցավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխարհական աշխատակիցների հետ:

Տերունական աղոթքից հետո Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը ներկաների անունից շնորհավորեց Նորին Սրբությանը հոգենորոգ տոների առիթով և Հայոց Հորը փոխանցեց ամենքի սերն ու նվիրումը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց նաև վարչատնտեսական բաժնի փոխտնօրեն տիար Արմեն Ղազարյանը:

Այնուհետև ներկաներին իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



Հայոց Հայրապետը, շնորհավորելով Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով, բարձրորեն գնահատեց Մայր Աթոռի պաշտոնեության նախանձախնդիր ծառայությունն ու նվիրումը՝ ի խնդիր Սուրբ Էջմիածնի առաքելության առավել արդյունավորման ու զորացման:

Այս առնչությամբ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ նաև անցնող տարում Մյուռոնօրհնության և Մայր տաճարի վերաօծման՝ Հայ Եկեղեցու և ժողովրդի կյանքում կարևորագույն իրադարձությունների կազմակերպման գործում Մայր Աթոռի աշխարհիկ պաշտոնեության անուրանալի ներդրմանը:

Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց Մայր Աթոռի աշխատակիցներին զորեղ կամքով, հույսով և հավատքով դիմակայել առկա բոլոր փորձություններին ու դժվարություններին՝ վստահություն հայտնելով նաև, որ մեր ժողովրդի զավակներն աստվածապավինությամբ կարող կլինեն հաղթահարել հայրենիքի առջև ծառացած մարտահարվերները:

Իր խոսքում Հայոց Հովվապետն ընդգծեց, որ Եկեղեցին հովվական, հոգևոր-խնամատարական և սոցիալական գործունեությամբ իր կարելի ջանքերն է ներդնում՝ ի նպաստ հայ ժողովրդին բաժին հասած դժվարությունների հաղթահարման:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի աշխատակիցներին մաղթեց Աստծո օգնականությունն ու պահպանությունը՝ հայցելով Երկնավորի օրհնությունն ու շնորհները նրանց ընտանիքներին, որպեսզի ուրախության զգացումով կարողանան ամբողջանվեր ծառայություն բերել Սուրբ Եկեղեցուն և հայրենիքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բոյա» գիտահետազոտական կենտրոնի պատվիրակությանը

Հունվարի 13-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բոյա» գիտահետազոտական կենտրոնի (Պեկին) պատվավոր նախագահ Ռուի-ցի Լիուի գլխավորած պատվիրակությանը:

Հյուրերն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրին կենտրոնի ծրագրերը և գործունեությունը, ինչպես նաև Հայաստան այցի նպատակը՝ ուսումնասիրել հայկական մշակույթը, ավանդույթները, Հայ Եկեղեցու պատմությունն ու գործունեությունը:

Այնուհետև Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց կենտրոնի ներկայացուցիչներին Հայաստանում նմանօրինակ նախաձեռնության իրականացման համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց Սուրբ Էջմիածնի առաքելությանը հայ ժողովրդի կյանքում՝ մասնավորապես ընդգծելով քրիստոնեական հավատքի կարևոր դերակատարությունն ազգային ինքնության, հոգևոր-մշակութային ժառանգության կերտման, ինչպես և ազգապահպանության գործում:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ նաև հայ-չինական պատմական առնչակցություններին և Չինաստանում վերջին շրջանում ձևավորված փոքրաթիվ հայ համայնքի կյանքին՝ հույս հայտնելով, որ «Բոյա» գիտահետազոտական կենտրոնի նախաձեռնությունը կնպաստի երկու ժողովուրդների փոխճանաչողության խորացմանը և կապերի առավել սերտացմանը:

Իր հերթին տիար Ռուի-ցի Լիուն Հայոց Հայրապետին տեղեկություններ փոխանցեց Արևմտյան Հայաստանում և Թբիլիսիում արդեն իսկ իրականացված հայկական հոգևոր-մշակութային ժառանգության ուսումնասիրությունների և ապագայի ծրագրերի մասին:

Կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Վիրապ աբեղա Սարգսյանը ծառայության է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում, Հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Մխիթարյանը ծառայության է կոչվել Վեհարանում՝ որպես Կաթողիկոսական գրասենյակի գործավար-քարտուղար, Արժանապատիվ Տ. Նարեկ քահանա Սարգսյանը՝ Արագածոտնի թեմում, Արժանապատիվ Տ. Թադեոս քահանա Գևորգյանը՝ Կրասնոդարի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմում, Արժանապատիվ Տ. Արամ քահանա Բաղումյանը՝ Տավուշի թեմում, Արժանապատիվ Տ. Երեմիա քահանա Վարդանյանը՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում:

Արժանապատիվ Տ. Գաբրիել քահանա Վարդանյանը, ազատվելով Գևորգյան հոգևոր ճեմարանում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Կանադայի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետը՝ Ձմեռ պապի նախատիպ

Ամանորը, թերևս, մանուկների և, ինչո՞ւ ոչ, շատ մեծահասակների ամենասիրելի տոնն է: Շատերի համար այն ընտանեկան ջերմության, հարազատության և լիասիրտ ուրախության հետ է առնչակցվում:

Ինչպես ցանակցած տոն, Ամանորը ևս առանձնանում է իրեն ներհատուկ խորհրդանիշներով և ողջ աշխարհում ճանաչում գտած կերպարներով: Ամանորի գլխավոր կերպարը Ձմեռ պապն է կամ, ինչպես շատ երկրներում են նրան անվանում, Սանտա Կլաուսը, առանց որի Նոր տարին ոչ ոք չի պատկերացնում: Ձմեռ պապը բոլորիս մանկության այն կիսաառասպելական կերպարն է, որին մենք նամակներ էինք գրում՝ անհամբեր սպասելով նրա հայտնությանը և ամանորյա նվերներին:

Շատերը հեքիաթ են համարում Ձմեռ պապի մասին պատմությունները, մինչդեռ նա իրականում գոյություն է ունեցել, ավելին՝ Ընդհանրական Եկեղեցում ճանաչված սուրբ հայրապետերից է: Ճիշտ է, նա չի ծնվել հեռավոր Լապլանդիայում և, հավանաբար, երբեք էլ կարմիր կամ կապույտ զգեստով չի նստել իր եղնիկներով սահնակը և Ձյունանուշի ուղեկցությամբ սավառնել ձյունաբեր ամպերի վրայով, սակայն արել է ամենակարևորը. նվերներ է բաժանել: Եվ մեր պատմական Ձմեռ պապի անունն է Սուրբ Նիկողայոս:

Սուրբ Նիկողայոսը, ըստ ավանդության, ծնվել է 270 թ. Փոքր Ասիայի Լիկիա գավառի Պատարա քաղաքում (ներկայիս Անթալիայի մոտակայքում)՝ քրիստոնյաների ընտանիքում: Ազգությամբ եղել է հույն: Նիկողայոս անունը հունարենից թարգմանաբար նշանակում է ժողովուրդների հաղթող: Հոգևորական է դարձել՝ ձեռնադրվելով իր մորեղբոր կողմից, որը Լիկիայի Միռա քաղաքի եպիսկոպոսն էր: Այնուհետև դարձել է Միռայի եպիսկոպոս: Ի թիվս բազում հրաշագործությունների, որոնց համար ստացել է Սքանչելագործ պատվանունը, նրա մասին պահպանվել է այս հետաքրքրական պատմությունը ևս:

Մի սնանկացած մարդ երեք դուստր ուներ, որոնց պետք է ամուսնության տար: Ժամանակի ընդունված կարգն էր՝ հայրը պետք է դստերն օժիտ հատկացներ, սակայն վերջինս անհրաժեշտ գումարը չուներ: Վշտացած հոր միակ ելքը մնում է դստերին ստրկության վաճառելը: Իմանալով այդ մասին՝ Սուրբ Նիկողայոսը գիշերը թաքուն մոտենում է նրանց տանը և բաց պատուհանից ոսկով լի քսակ նետում, ինչի շնորհիվ էլ դստերից մեկի հարսանիքը կազմակերպում են: Այդպես նա երեք անգամ գիշերով ոսկի է նետում այդ մարդու տուն, և երեք դուստրերն էլ ամուսնանում են: Այսպիսով՝ Սուրբ Նիկողայոսը աղջիկներին փրկում է ստրկությունից: Ասում են՝ հայրը երկրորդ դստերն ամուսնացնելուց հետո գիշերները հսկում է, որ գտնի գաղտնի բարերարին, և երրորդ քսակը նետելու ժամանակ Սուրբ Նիկողայոսի անձը բացահայտվում է:

Ս. Նիկողայոս Սքանչելագործ, ծաղկող՝ Մինաս, Երևան, ձեռ. 508 բ, էջ 44 ա, Ճաշոց, 1460 թ., Արծկե

Այս պատմության հետ է կապված նաև ամանորյա նվերները գուլպայի մեջ դնելու՝ աշխարհում ընդունված ավանդույթը: Սուրբ Նիկողայոսի նետած քսակներից մեկը, ըստ ավանդության, ընկել է կրակի մոտ կախված գուլպայի մեջ:

Սուրբ Նիկողայոսն իր կյանքի ընթացքում բազում այլ բարեգործություններ ևս արել է: Լինելով հարուստ ընտանիքից սերված զավակ՝ ծնողների մահից հետո նա վաճառում է իր ունեցվածքը՝ ըստ Ավետարանական այն խոսքի, որ «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառիր ինչ որ ունես ու աղքատներին տուր և երկնքում գանձեր կունենաս. և վերցրու խաչդ և արի իմ հետևից» (Մարկ. 10:21), գումարը բաժանում աղքատներին՝ ինքը նվիրվելով հոգևոր ծառայությանը:

Սուրբ Նիկողայոսը նաև ուղղափառ հավատի եռանդուն պաշտպան է եղել: Նա Դիոկղետիանոս արքայի հալածանքների օրոք ձերբակալվել և աքսորի է ենթարկվել: Հալածանքներից հետո պայքարել է արիոսական հերձվածի դեմ և 325 թ. մասնակցել Նիկիայի Տիեզերական ժողովին:

Հայաստանյայց Եկեղեցու տոնացույցում Սուրբ Նիկողայոս Սքանչելագործի տոնը սովորաբար նշվում է դեկտեմբերի սկզբին: Նա համարվում է համայն Ռուսաստանի պահապան սուրբը, նաև նավաստիների, վաճառականների, ուսանողների և մանուկների բարեխոս սուրբն է: Իսկ աշխարհում տարածված Սանտա Կլաուս (Santa Claus) անունն առաջացել է Սուրբ Նիկողայոս (Saint Nicholaus) անվան կրճատված և փոփոխված ձևից: Կլաուս-ից է առաջացել նաև հայերեն Կաղանդ բառը:

Անշուշտ, Նիկողայոս Հայրապետը, համաձայն իր անվան թարգմանության, իրապես հաղթանակել է՝ ժողովուրդների մեջ իր թողած անջնջելի հիշատակով: Նրա բարեգործությունների մասին ավանդություններն այնպես են արմատավորվել քրիստոնյա աշխարհում, որ իր մահից 1700 տարի անց էլ Սուրբ Նիկողայոսը համարվում է մեծագույն տոներից մեկի ամենաճանաչելի խորհրդանիշը: Այո՛, կերպարը դարերի ընթացքում կրել է որոշ փոփոխություններ, տարբեր ժողովուրդներ սեփական պատկերացումներն ու առասպելական տարրերն են ավելացրել նրան, սակայն բուն քրիստոնեական նվիրաբերման ու սիրո ոգին մնացել է նույնը: Չէ՞ որ ինչպես երեք դուստրերի հայրն էր գիշերները հսկում, որպեսզի հանդիպի իր բարեգործին, այնպես էլ մենք մանուկ հասակում գեթ մեկ անգամ փորձել ենք տեսնել այն պահը, թե ինչպես է Ձմեռ պապը մեր տուն բերում բաղձալի նվերները: Եվ հենց այդ սպասումը և ուրախությունն են Սուրբ Նիկողայոս հայրապետի գործի շարունակականությունն ու անմահությունը:

Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

ՏՈ՛ՒՐ ԻՆԾԻ, ՏԷ՛Ր...

Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Ծաղիկներու պէս զայն ժողվեմ ճամբուս վրան՝
Նայուածքներուն մէջ ամէնուն եւ ամէն օր:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Եւ ես՝ հանգոյն երփնալուցկի վառող մանկան,
Զայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դէմքի մը վրան:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Զանգակներու պէս զայն կախեմ ամէն դըրան
Ու զերթ նարօտ ամէն դըրան զայն պըսակեմ:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Երգերու պէս զայն բոցեմ բազմաստեղնեան
Խաւարին մէջ ամէն երդ ու խրճիթներու:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Զայն սրբասաց իմ հոգեակիս ընեմ խորան,
Զայն իմ մտքիս ծըխեմ՝ զերթ խունկ բազմաբուրեան:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական,
Ու չըլլայ որ ուրիշներու կոծն ու կական
Խեղդել ուզեմ ջրվէժին մէջ դափիս ձայնին:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական,
Ու չըլլայ որ դափիս ձայնին երգը գուժկան
Եսիս սենեակն ունենայ՝ ցո՛ւրտ առանձնարան:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Ու սեղանիս վըրայ դրուած մէն մի նըկան՝
Զոյգ մը խինդեր գէթ ունենայ թող խաչանիշ:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Ու բաղխեմ զայն սրտիս ժայռին՝ իբրեւ մական՝
Որ բղխեցնէ ջուրն աներկմիտ երանութեան:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Զայն ջուրերու վըրայ ձըգեմ իբրեւ ուռկան,
Զայն իբր արօր ակօսներու ձըգեմ վըրան:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Զայն իբր անձրեւ ցօղեմ ամէն դաշտին վըրան,
Զայն իբր արեւ բաշխեմ ամէն հորիզոնի:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Զայն ընդգրկած իտէալին ըլլամ որսկան.
Զայն լաստ ըրած ես Լոյսերու նաւո՛ղն ըլլամ:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Ժողվել՝ հոգւոյն մէջ ծերերուն, կոյսին, մանկան,
Պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանուորին:
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական.
Ժողվել՝ հոգւոյն մէջ ամէնո՛ւն, համայնական
Հոգւոյն ամէն մասնիկներուն մէջ՝ ամէն ժամ:
Ճամբաներէն, ու գետերէն, ու դաշտերէն,
Անտառներէն, ու լեռներէն, ու ձորերէն,
Տանիքներէն, ու տուներէն, ու դուռներէն՝
Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական:

Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն

Սուրբ Ծնունդը քրիստոնեական աշխարհի ամենալուսավոր և գեղեցիկ տոներից է, որը բոլորին ավետում է աշխարհի Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ծնունդի և հայտնության մասին, այդ պատճառով կոչվում է Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոն: Լինելով Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից առաջինը՝ այն մշտապես տոնվում է հունվարի 6-ին: Դեպքը պատմվում է Աստվածաշնչում՝ Նոր Կտակարանում, Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում:

Մեզանից երկու հազար տարի առաջ Բեթղեհեմ քաղաքում՝ մսուրի մեջ, ծնվեց մի Մանուկ, Որ փոխեց մարդկության պատմությունը: Ավետարանիչը պատմում է, որ Աստված, ընտրելով Հովսեփի նշանած Մարիամին, նրա մոտ է ուղարկում Իր հրեշտակին՝ Գաբրիելին, որ Նազարեթում երևալով՝ նրան ավետում է. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև Աստծուց շնորհ գտար: Եվ ահա կհղիանաս ու կծնես մի որդի և անունն էլ Հիսուս կդնես» (Ղուկաս 1:30–31): Ղուկաս ավետարանիչը Սուրբ Ծննդյան պատմությունն սկսում է նրանից, թե ինչպես Հռոմի կայսր Օգոստոսի հրամանով՝ այդ օրերին բոլորը մեկնում էին իրենց ծննդավայր՝ մարդահամարին մասնակցելու: Մարիամի նշանածը՝ Հովսեփը, Դավթի տոհմից էր և հետևելով կարգին՝ մեկնում է Բեթղեհեմ՝ Դավթի քաղաքը՝ այնտեղ գրանցվելու համար: Բեթղեհեմում լրանում են Մարիամի հղիության օրերը, և հենց այնտեղ՝ մսուրում, քանի որ իջևանատներում տեղ չկար, ծնվում է Հիսուսը:

Հիսուսի ծննդյան լուրը հրեշտակն առաջինն ավետեց հովիվներին, որոնք գիշերն իրենց ոչխարների հոտն էին պահպանում. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որն ամբողջ ժողովրդինը կլինի: Քանզի այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, Որ Օծյալն է՝ Տերը» (Ղուկաս 2:10–11): Հովիվները, որ պարզ ժողովրդի անմիջական ներկայացուցիչներն էին, առաջինն իմացան աշխարհի փրկության լուրը և ականատես եղան, թե ինչպես են հրեշտակները երգելով փառաբանում. «Փառք Աստծուն Բարձունքներում, խաղաղություն երկրի վրա և հաճություն մարդկանց մեջ» (Ղուկաս 2:14):

Սանդրո Բոտիչելլի, Հիսուսի ծնունդը, 1473—1475 թթ.

Սանդրո Բոտիչելլի, Մոգերի երկրպագությունը, 1474 թ.

Մատթեոս ավետարանիչը պատմում է, որ Հիսուսի ծնունդից հետո արևելքից մոգեր են գալիս Երուսաղեմ՝ նրան երկրպագելու (Մատթեոս 2:1–2): Հրեաները սխալ էին հասկացել մարգարեներին և սպասում էին, որ պետք է ծնվեր մեկը, որ պատերազմելու էր բոլոր թշնամիների դեմ և ստեղծելու էր իրենց անկախ թագավորությունը: Հետևաբար՝ մոգերի՝ Երուսաղեմ գալն ու Մեսիայի ծնվելու մասին լուրեր տարածելն անհանգստացնում են Հերովդեսին, որ Հրեաստանի թագավորն էր: Վախենալով իր իշխանության համար՝ Հերովդեսը գաղտնի ուղարկում է մոգերին՝ Մանկանը գտնելու, որպեսզի իբրև թե ինքն էլ գնա և երկրպագի Նրան: Մոգերը, հետևելով աստղին, որ տեսել էին արևելքում, գտնում են մսուրը և մտնելով՝ տեսնում Մանկանը մոր գրկում, ինչպես և պատկերված է բոլոր եկեղեցիների ավագ խորաններին. «Եւ երբ այն տունը մտան, տեսան մանկանը իր մօր՝ Մարիամի հետ միասին եւ ընկան ու երկրպագեցին նրա. եւ բանալով իրենց գանձատուփերը՝ նրան նուէրներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Եւ երազի մէջ Աստծուց հրաման առնելով չվերադառնալ Հերովդէսի մօտ, այլ ճանապարհով գնացին իրենց երկիրը» (Մատթեոս 2:11–12): Այսպիսով՝ մոգերը Մանկանը գտնելուց հետո, երազ տեսնելով, չեն հայտնում Հերովդեսին ծննդյան ստույգ վայրը և վերադառնում են իրենց երկիր:

Երբ Հերովդեսը հասկանում է, որ մոգերից խաբվել է, զայրացած ուղարկում է մարդկանց և կոտորել տալիս Բեթղեհեմում ու շրջակայքում գտնվող երկու տարեկան և ավելի փոքր բոլոր մանուկներին (Մատթեոս 3–16):

Հիշատակված մոգերի մասին ուրիշ ոչ մի տեղեկություն չկա Աստվածաշնչում: Մնացածն իմանում ենք հայրերի աշխատություններից և սրբազան ավանդությունից:

Եկեղեցու հայրերից ոմանք խորհրդանշական տասներկու մոգերի մասին են խոսում: Վաղքրիստոնեական հեղինակներից Որոգինեսը խոսում է միայն երեք մոգերի մասին՝ նրանց կողմից մատուցված ընծաների պատճառով: Բեդա Պատվելին նույնիսկ նրանց անուններն է հիշատակում՝ Մելքոն, Գասպար և Բաղդասար: Հիշենք՝ մոգ հիմնականում կոչում էին զրադաշտական քահանաներին կամ բաբելոնացի աստղագետներին: Ուշ շրջանում քրիստոնյա հեղինակներն սկսեցին մոգերին պատկերել թագավորների կերպով: Եվրոպական որոշ երկրներում վերջիններս համարվում են ճանապարհորդների հովանավոր սրբեր, և այդ պատճառով հաճախ հնարավոր է հանդիպել նրանց անուններով հյուրանոցների:

Վարդգես Սուրենյանց, Տիրամայրը Մանկան հետ, 1891 թ.

Եկեղեցական ավանդություններից մեկում պատմվում է, որ Հեղինե կայսրուհին չորրորդ դարում հայտնաբերել է մոգերի մասունքները և տարել Կոստանդնուպոլիս: Մատթեոս ավետարանիչը վկայում է, որ մոգերն իրենց գանձատուփերով ընծաներ էին բերել Քրիստոսին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս: Ոսկին, ինչպես գիտենք, թանկարժեքություն է և խորհրդանշում է Հիսուսին՝ որպես Թագավորի: Կնդրուկը, այսինքն՝ խունկը, օգտագործվում է ծիսական արարողությունների և երկրպագությունների ժամանակ և մատուցվում է Աստծուն: Սա մատնանշում է Հիսուսին՝ որպես Աստծու Որդու, Որին պաշտում են երկնքում և երկրի վրա: Իսկ զմուռսը բուսական խեժ է, որն օգտագործում են մումիֆիկացման և մահացածների մարմինները պատրաստելու համար: Զմուռսը կանխատեսում է Հիսուսի մահն ու թաղումը՝ հիշեցնելով, որ Նա ծնվել է, որ մահանա մարդկության մեղքերի համար: ➥ էջ 7

Սիրո խորհրդաբանությունը Աստվածաշնչում

«Սիրելինե՛ր, սիրենք միմեանց, քանի որ սէրն Աստծուց է. եւ ամէն ոք, ով սիրում է, Աստծուց է ծնուած եւ ճանաչում է Աստծուն: Իսկ նա, ով չի սիրում, չի ճանաչում Աստծուն, քանի որ Աստուած սէր է: Եւ սրանո՛ւմ երևաց Աստծու սէրը մեր հանդէպ. այն, որ Աստուած իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի նրանով կենդանի լինենք: Սրանո՛ւմ է սէրը. մենք չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ նա՛ սիրեց մեզ եւ ուղարկեց իր Որդուն մեր մեղքերի քաւութեան համար: Սիրելինե՛ր, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա մենք եւս պարտաւոր ենք սիրել միմեանց»:

Ա Յովհ., 4–7:11

Սիրո գաղափարը գերակա է Սուրբ Գրքում՝ սկզբից մինչև վերջ՝ Հին ու Նոր Կտակարաններում: Հին Կտակարանում սիրո դեպքում օգտագործվում է եբրայերեն «*ահավա*» բառը, իսկ Նոր Կտակարանում կիրառված են «*ագապե*» և «*ֆիլիա*» բառերը: Եթե «*ահավա*»-ն իր մեջ ամփոփում է սիրո բոլոր ձևերն ու իմաստները, ապա հունարենում տարբերություն կա վերոնշյալ երկու դրսևորումների միջև: «*Ագապե*»-ն, որ ավելի հաճախ է գործածվում, Նոր Կտակարանում ունի շատ լայն ընդգրկում՝ մարդկային սիրուց մինչև աստվածային սեր, իսկ «*ֆիլիա*» բառով բնութագրվել է եղբայրական, ընկերական կամ բարեկամական սերը:

Աստվածաշնչի պատումի ողջ ընթացքում սերը, անկախ նրանից՝ մարդկանց փոխհարաբերությունների՞ն է առնչվում, թե՞ Աստծուն, ողջ աշխարհի գոյության առանցքն է: Ինչպես շատ աստվածաբաններ են նշում, Աստված աշխարհն արարել է սիրո գերառատությունից: Արարչությունից հետո Սուրբ Գրքի ողջ ընթացքը կարելի է բնութագրել որպես Աստծո սիրո անվերջ դրսևորում մարդկության նկատմամբ:

Ինչպես որ Աստվածաշնչի գրքերն են բազմաժանր և յուրատեսակ, այնպես էլ սիրո խորհրդաբանության դրսևորումներն են տարբերվում գրքից գիրք: Օրինակ՝ «Երգ երգոց»-ը լի է փեսայի և հարսի միջև սիրո խորհուրդներով ու պատկերներով: Այս գիրքը եկեղեցական հայրերի կողմից մեկնաբանվել է այլաբանորեն, ըստ որի՝ փեսան Քրիստոսին է խորհրդանշում, իսկ հարսը՝ Եկեղեցին: Սակայն անգամ ոչ այլաբանորեն մեկնաբանելու դեպքում այն մի հրաշալի ստեղծագործություն է, որը լավագույնս է բնութագրում մարդկային սիրո դրսևորումներից մեկը: Ահա մի հատված «Երգ երգոց»-ից.

«Վե՛ր կաց, իմ սիրելի, իմ գեղեցիկ, իմ աղաւնի:
Ահա ձմեռն անցաւ,
անձրևները անցան-գնացին,
ծաղիկները երևացին մեր երկրում,
էտելու ժամանակը հասաւ,
տատրակի ձայնը լսուեց մեր երկրում:
Թզենին իր բողբոջն արձակեց,
ծաղկած որթերը տարածեցին իրենց հոտը:
Վե՛ր կաց, իմ սիրելի, իմ գեղեցիկ, իմ աղաւնի:
Ո՛վ իմ աղաւնեակ,
դու, որ պատսպարուել ես վէմի հովանու տակ,
ցո՛յց տուր քո երեսն ինձ
եւ լսելի՛ դարձրու ինձ քո ձայնը,
քանզի քաղցր է քո ձայնը,
եւ գեղեցիկ է երեսը քո»:
(Երգ երգոց 2:10–14)

Իսկ Եփես. 5:28 հատվածում կարդում ենք. «Մարդիկ պարտավոր են սիրել
իրենց կանանց իբրև իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում»:



Ֆրանց Պֆոռռ, Սուլամիթա և Մարիամ, 1810—1811 թթ.

Կնոջ և տղամարդու միջև սերը Աստծո կողմից օրհնված է և միտված մարդու երջանկությանն ու բարիքին: Աստված, օրհնելով Ադամի և Եվայի միասնությունը, նրանց կոչեց երկուսով մի մարմին լինելու (Ծննդ. 2:24):

Հին Կտակարանում նույն բառով է արտահայտվում նաև ծնող–զավակ սերը: Օրինակ՝ Աբրահամի սերն իր որդի Իսահակի հանդեպ (Ծննդ. 22:2, 22:16), Իսահակի և Ռեբեկայի սերը որդիների՝ Եսավի և Հակոբի նկատմամբ (Ծննդ. 25:28):

Սուրբ Գրքում մեծ կարևորություն է տրվում նաև ընկերական սիրուն՝ հիմնված հավատարմության վրա: Այսպես՝ Ա Թագ. 18:3-ում կարդում ենք. «Յովնաթանը Դաւթի հետ ուխտ դրեց, քանզի Յովնաթանը նրան իր անձի պէս էր սիրում»:

Աստված ժողովրդին պատվիրում է սիրել անգամ օրենքի մակարդակով: Երբ Քրիստոսին հարցնում են, թե ո՞րն է օրենքի մեծագույն պատվիրանը, Նա պատասխանում է. «Պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծը եւ առաջին պատուիրանը. եւ երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս քո անձը: Այս երկու պատուիրաններից են կախուած ամբողջ Օրէնքը եւ մարգարէները» (Մատթ. 22:37–40): Հարկ է նշել, որ այս երկու պատվիրանները վերցված են Բ Օրինաց 6:5–6 և Ղևտ. 19:19–18 հատվածներից:

Սերը նաև հանրային կյանքի հիմքերից մեկն է: Ղևտ. 19:18 դրվագում կարդում ենք. «Վրեժխնդիր մի՛ լինիր և քո ժողովրդի դեմ ոխ մի՛ ունեցիր: Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպես ինքդ քեզ, քանզի ես եմ Տերը»: Այս հատվածը շատերի կողմից ընկալվել է որպես Հնգամատյանի՝ կենտրոնական նշանակություն ունեցող սկզբունք: Ռաբբի Ակիվան այն կոչել է «Թորայի մեծագույն սկզբունք»: Սրա կողքին Ղևտականում կա ևս մի կարևոր դրույթ. «Եթէ ձեր երկրում օտարական հաստատուի, նրան չնեղէք: Ձեր երկրի տեղաբնակի պէս ընդունեցէք նրան, եւ եկուորը թող բնակուի ձեզ մօտ: Նրան սիրի՛ր քո անձի պէս, որովհետև դուք էլ պանդուխտ եղաք Եգիպտացիների երկրում» (Ղևտ. 19:33–34): Հնգամատյանը սիրո միջոցով կարգավորում է մտցնում հասարակական հարաբերությունների մեջ: Օտարականին սիրելու պատգամը կարևոր է՝ հասկանալու, որ Աստծո կողմից պատգամված սերը միայն ազգակիցների հանդեպ չէ, որ պետք է դրսևորվի:

Հովհաննես առաքյալի առաջին ընդհանրական թղթում կարդում ենք. «Քանզի այս է Աստծու հանդէպ մեր սէրը. որ պահենք նրա պատուիրանները» (Ա Յովհ. 5:3): ➥ էջ 6

Սուրբ Հովհաննես Կարապետի ծննդյան տոնը

«Ապա ի՞նչ տեսնելու ելաք. մի մարգարէ՞. այո՛, ասում եմ ձեզ. առաւե՛լ քան մի մարգարէ, որովհետև նա է, որի մասին գրուած է. «Ահա ես կուղարկեմ իմ պատգամաւորին քո առջևից, որ քո առաջ ճանապարհը պատրաստի»

(Մատթ. 11. 9—11):



Խուան Նավարեթ, Հիսուսի մկրտությունը, 1567 թ.

Սուրբ Հովհաննես Մկրտչի ծննդյան տոնը նշվում է Հիսուս Քրիստոսի Անվանակոչության հաջորդ օրը՝ հունվարի 14-ին, եթե այդ օրը չորեքշաբթի, ուրբաթ կամ կիրակի չէ: Եթե Առաջավորաց պահքի մի մասը հանդիպում է Սուրբ Ծննդյան ութօրեքի մեջ, ապա Մկրտչի ծննդյան տոնը նշվում է Առաջավորաց պահքից անմիջապես հետո՝ շաբաթ օրը:

Հովհաննես Մկրտչի ծննդյան և գործունեության վերաբերյալ տեղեկություններ են արձանագրված Ավետարաններում: Կարապետի ծննդյան պատմությունը հետևյալ կերպ է նկարագրված Ղուկասի Ավետարանում. «Հրէաստանի Հերովդէս թագաւորի օրով Աբիայի քահանայական ընտանիքից Զաքարիա անունով մի քահանայ կար, որի կինը Ահարոնի դստերից էր. նրա անունը Եղիսաբեթ էր: Եւ երկուսն էլ Աստծու առաջ արդար էին ու անարատ կերպով ընթանում էին Տիրոջ բոլոր պատուիրանների եւ օրէնքների ճանապարհով: Նրանք որդի չունէին, որովհետև Եղիսաբեթը ամուլ էր, եւ երկուսն էլ իրենց առաջացած տարիքում էին: Եւ մինչ Զաքարիան Աստծու առջև իր քահանայական պաշտօնն էր կատարում, իր կարգի օրերը հասած լինելով՝ ըստ քահանայութեան օրէնքի նրան վիճակուեց մտնել Տիրոջ տաճարը եւ խնկարկել: Եւ խնկարկութեան ժամին ժողովրդի ամբողջ բազմութիւնը դրսում աղօթքի էր կանգնած: Եւ Տիրոջ հրեշտակը երևաց նրան՝ խնկերի սեղանի աջ կողմում կանգնած: Երբ Զաքարիան նրան տեսաւ, խռովուեց, եւ վախ ընկաւ նրա մէջ: Տիրոջ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Զաքարիա՛, որովհետև քո աղօթքը լսելի եղաւ. քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կը ծնի քեզ, եւ նրա անունը Յովհաննէս կը դնես: Նա քեզ համար ուրախութիւն եւ ցնծութիւն կը լինի, եւ շատերը կուրախանան իր ծննդով, որովհետև նա Տիրոջ առաջ մեծ կը լինի, գինի եւ օղի չի խմի եւ մօր որովայնից սկսած Սուրբ Հոգով կլցուի եւ Իսրայէլի որդիներից շատերին կդարձնի դէպի իրենց Տէր Աստուածը: Նա Եղիայի հոգով եւ զօրութեամբ պիտի գնայ նրա առաջից, որպէսզի հայրերի սրտերը որդիներին դարձնի ու անհնազանդներին՝ արդարների իմաստութեանը՝ Տիրոջ համար պատրաստ մի ժողովուրդ կազմելու»: Եվ Զաքարիան ասաց հրեշտակին. «Ես ի՞նչ կերպ կ՚իմանամ այդ, քանի որ ես ծեր եմ, եւ կինս էլ առաջացած տարիքում է»: Հրեշտակը նրան պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ, որ կանգնում եմ Աստծու առաջ. ես ուղարկուեցի խօսելու քեզ հետ եւ այդ բանը քեզ աւետելու: Եւ ահա՛, դու համր կլինես եւ չես կարողանայ խօսել մինչև այն օրը, երբ այդ կատարուի, քանի որ դու չհաւատացիր իմ խօսքերին, որ կիրականան իրենց ժամանակին»:

Իսկ ժողովուրդն սպասում էր Զաքարիային. զարմանում էին, որ տաճարում նա ուշանում է. «Եւ երբ նա դուրս եկաւ, չէր կարողանում խօսել նրանց հետ: Եւ նրանք իմացան, թէ տաճարում տեսիլք էր տեսել. եւ նա նշանացի էր խօսում նրանց հետ ու մնում էր պապանձուած: Եւ երբ պաշտամունքի իր օրերը լրացան, գնաց իր տունը: Այդ օրերից յետոյ նրա կինը՝ Եղիսաբեթը, յղիացաւ: Հինգ ամիս նա թաքցնում էր ինքն իրեն եւ ասում. «Այս ինչ բան արեց Տէրը ինձ իմ այս օրերին, երբ նայեց ինձ վրայ՝ վերացնելով իմ նախատինքը մարդկանց միջից» (Ղուկ. 1.5—25): Այնուհետև՝ «Եղիսաբեթի ծննդաբերելու ժամանակը լրացաւ, եւ նա մի որդի ծնեց. եւ նրա շուրջը գտնուողներն ու նրա ազգատոհմը լսեցին, որ Տերն իր մեծ ողորմութիւնը ցոյց տուեց նրա հանդէպ, եւ ուրախանում էին նրա հետ: Եւ ութերորդ օրը եկան մանկանը թլփատելու. եւ նրան իր հօր անունով Զաքարիա էին կոչում: Բայց նրա մայրը պատասխանեց եւ ասաց. «Ո՛չ, այլ Յովհաննէս պէտք է կոչուի»: Նրան ասացին. «Սակայն քո ազգատոհմի մէջ չկայ մէկը, որի անունը Յովհաննէս լինի»: Նշանացի ակնարկեցին նրա հօրը, թէ ի՞նչ կը կամենայ նրան կոչել: Իսկ նա մի տախտակ ուզեց եւ վրան գրեց. «Դրա անունը Յովհաննէս է»: Եւ բոլորը զարմացան: Եւ իսկոյն նրա բերանը բացուեց եւ նրա լեզուն՝ նոյնպէս. եւ խօսում էր ու օրհնում Աստծուն: Եւ ահ ընկաւ բոլորի մէջ, որ լսեցին այս, եւ նրանց մէջ, որ բնակւում էին նրանց շուրջը: Եւ Հրէաստանի ամբողջ լեռնակողմում այս բոլոր բաները պատմւում էին: Եւ բոլոր լսողները պահում էին իրենց սրտերում այս ամէնը եւ ասում էին. «Արդեօք ի՞նչ կը լինի այս մանուկը»: Եւ Տիրոջ ձեռքը նրա հետ էր: Զաքարիան՝ նրա հայրը, Սուրբ Հոգով լցուեց, մարգարեացաւ եւ ասաց. «Օրհնեալ է Իսրայէլի Տեր Աստուածը, որ այցի եկաւ մեզ եւ փրկութիւն բերեց իր ժողովրդին: Եւ Իր ծառայ Դաւթի տնից մեզ համար մի հզօր Փրկիչ հանեց, ինչպէս որ խօսել էր սրբերի բերանով, որոնք հին դարերում նրա մարգարէներն էին. փրկութիւն՝ մեր թշնամիներից եւ բոլոր մեր ատողների ձեռքից՝ ողորմութիւն անելու համար մեր հայրերին եւ յիշելու իր սուրբ ուխտը. այն երդումը, որ արել էր մեր հօրը՝ Աբրահամին, որպեսզի թշնամիների ձեռքից փրկուած՝ կարողանանք առանց երկիւղի ծառայել նրա առաջ, սրբութեամբ եւ արդարութեամբ, մեր կեանքի բոլոր օրերում: Եւ Դու՛, Ո՛վ Մանուկ, Բարձրեալի մարգարէն պիտի կոչուես, որովհետև պիտի գնաս Տիրոջ առաջից՝ պատրաստելու նրա ճանապարհները, տալու նրա ժողովրդին փրկութեան գիտութիւնը՝ նրանց մեղքերի թողութեան համար, մեր Աստծու գթառատ ողորմութեան շնորհիւ, որով բարձունքից արեգակը մեզ կայցելի ծագելու նրանց վրայ, որոնք նստած են խաւարի եւ մահուան ստուերների մէջ, ուղղելու մեր ոտքերը դէպի խաղաղութեան ճանապարհները» (Ղուկ. 1.57—79):

Հովհաննես Մկրտչի ծնունդը նշանակալից է իր խորհրդավորությամբ ու գեղեցկությամբ: Ծնողների մահից հետո Հովհաննեսը մնաց միայնակ, և վաղ հասակից անապատը դարձավ նրա կրթիչն ու դաստիարակը: Սուրբը մեծացավ վայրի ու անբերրի անապատում՝ խստակրոն կյանքով, պահքով ու աղոթքներով՝ աստվածաբույր խոհերով նախապատրաստելով իրեն մեծագույն ծառայությանը: Նա «ուղտի մազից զգեստ ունէր եւ կաշուէ գօտի՝ իր մէջքին, իսկ նրա կերակուրն էր մորեխ ու վայրի մեղր» (Մատթ. 3:4):

Այսպիսով՝ երբ «ժամանակը լրացավ», Հովհաննես Մկրտիչն իր կոչումին հնազանդ սկսեց պատրաստել մարդկանց՝ Ավետյաց Փրկչին ընդունելու: Նա շուրջ 30 տարեկան էր, երբ հոգու մղումով հայտնվեց Հորդանանի ափերի մոտ: Այդ ժամանակ Երուսաղեմի ողջ շրջակայքից գալիս էին նրա մոտ մկրտվելու և իրենց մեղքերը խոստովանելու: Հովհաննեսը մարդկանց մկրտում էր ջրով և թողություն շնորհում մեղավորներին՝ ասելով. «Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները. նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով» (Մատթ. 3:11):

Հովհաննես Մկրտիչն Աստծո նախախնամությամբ եկավ աշխարհ, որպեսզի վկայի Լույսի մասին, ինչպես Հովհաննես աստվածաբան ավետարանիչն է դիպուկ նկարագրել. «Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված. նրա անունը՝ Հովհաննես: Ինքը լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի լույսի մասին, որ բոլորը նրա միջոցով հավատան» (Հովհաննես 1:4): Իրապես, սուրբ Հովհաննես Մկրտիչը դարձավ Լույսին՝ Քրիստոսին վկայողն ու մկրտողը: Այս վկայության մասին է ազդարարում նաև հոգեներշող ելևէջներով հյուսված շարականը. «Երկնաքաղաքացի Հովհաննեսը՝ կանանցից ծնվածների մեջ մեծագույնը, ազդարարող բարբառով քարոզում էր անապատում արդարության Արեգակի՝ Լույսի ծագումը»:

Երբ Հիսուս եկավ Հորդանան գետում մկրտվելու, Հովհաննեսը թախանձագին դիմեց Փրկչին. «Ի՞նձ պետք է, որ քեզնից մկրտվեմ, և դու ի՞նձ մոտ ես գալիս» (Մատթ. 3:14): Հովհաննեսն արժանացավ մի պատվի, որին շատ մարգարեներ կցանկանային արժանանալ. նա մկրտեց աշխարհի Փրկչին, և անվանվեց Մկրտիչ:

Ավետարանից տեղեկանում ենք, որ Սուրբ Հովհաննեսն ազատորեն խոսեց և մեղադրեց Հերովդես թագավորին, որ ամուսնացել էր իր հարազատ, դեռևս կենդանի եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի հետ: Արքայական հարկի տակ կատարված այդ մեղքը մեծ գայթակղություն էր, և Հովհաննեսը՝ որպես Աստծուց առաքված, խիզախորեն ասաց. «Օրինավոր չէ, որ դու նրան իբրև կին ունենաս» (Մատթ. 14:4): Արքան այդ խոսքերի համար ցանկացավ սպանել նրան, բայց վախեցավ ժողովրդից, քանի որ նրան ստույգ մարգարե էին համարում, ուստի միայն բանտարկեց: Երբ Հերովդեսի ծննդյան օրը Հերովդիայի դուստրը, հավաքվածների առջև պարելով, գոհացրեց թագավորին, վերջինս երդումով խոստացավ տալ նրան այն ամենը, ինչ ցանկանա: Աղջիկը մոր հրահրումով թագավորին ասաց. «Տո՛ւր ինձ այստեղ՝ սկուտեղի վրա, Հովհաննես Մկրտչի գլուխը» (Մատթ. 14.3—12): Արքան տրտմեց, բայց քանի որ բոլորի առջև երդվել էր, հրամայեց գլխատել Հովհաննեսին. «Եվ նրա գլուխը բերվեց սկուտեղով ու տրվեց աղջկան: Եվ սա տարավ այն իր մորը»: Իսկ Հովհաննեսի աշակերտները եկան վերցրին մարմինն ու թաղեցին, այնուհետև պատմեցին Հիսուսին (Մատթ. 14. 12):

Սուրբ Հովհաննես Մկրտչի ծննդյան տոնը նշվում է Քրիստոսի տիեզերալույս Սուրբ Ծննդյան տոնակատարություններից հետո: Սրբին նվիրված ուրիշ տոներ ևս կան, որոնք նշվում են այլ սրբերի հետ կամ առանձին. դրանք Սուրբ Հովհաննես Կարապետի և Սուրբ Հոր Արդարի, Սուրբ Հովհաննես Կարապետի և Սուրբ Աթանագինես եպիսկոպոսի, Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության տոներն են:

Սիրանուշ ԱԴՅԱՆ
Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

Սիրո խորհրդաբանությունը Աստվածաշնչում

↩ էջ 5

Այսինքն՝ սերը ենթադրում է գործողություն, աշխատանք: Այն միայն բառերով կամ զգացմունքներով արտահայտվող երևույթ չէ, պահանջում է գործ՝ խոսքից առավել: Եթե Աստծո հանդեպ սերը պատվիրանապահությամբ է արտահայտվում, ապա ընկերոջ հանդեպ սերը անմնացորդ կերպով նվիրվելն է, նրա հանդեպ հոգատարություն ցուցաբերելը. «Սերը նրանո՛վ ճանաչեցինք, որ Յիսուս իր կեա՛նքը տուեց մեզ համար. մենք էլ պարտաւոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կեանքը: Ով այս աշխարհի բարիքներից ունենայ եւ տեսնի իր եղբօրը մի բանի կարօտ ու փակի իր սիրտը նրա առաջ, Աստծու սէրը ինչպէ՞ս կարող է բնակուել նրա մէջ» (Ա Յովի. 3:16—17): Սրա լավագույն օրինակներից մեկը Հիսուս ներկայացնում է Բարի սամարացու մասին առակում (Ղուկ. 10:29—37):

Գործուն սիրո առավել պատկերավոր նկարագրություն մենք գտնում ենք Պողոս առաքյալի թղթերում: Ա Կորնթ. 13 գլուխը, որը նաև «Սիրո օրհներգ» է կոչվում, ամբողջովին բացահայտում է սիրելու կերպը. «Սերը համբերող է, քաղցրաբարո է. սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում»: Իսկ վերջում հավելում է, որ սերը շնորհներից մեծագույնն է, անգամ ավելի մեծ, քան հավատն ու հույսը:

Աստվածաշնչում սերը՝ որպես խորհրդանիշ, անբաժանաբար կապված է կյանքի և մահվան հետ. «Հզօր է սէրը մահուան պէս» (Երգ երգոց 8:6): Իսկ սիրո մեծագույն խորհրդանիշը համարվում է խաչը, որի վրա Քրիստոս Իր կյանքը տվեց մարդկության փրկության համար, որպեսզի մարդը հավիտենական կյանք ունենա (Յովի. 3:14—16):

Սերը սեփական անձն ուրանալու և նվիրվելու գործընթաց է, որի կատարելատիպը Քրիստոսն է՝ անձնազոհությունը՝ բառի բուն իմաստով. «Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար» (Յովի. 15:13): Սուրբ Գրքում սիրո մեծագույն խորհրդանիշը մնում է Հիսուս Քրիստոսը: Քրիստոսի խաչելությունը և հարությունը խորհրդանշում են սիրո երկու հատկությունները՝ կյանքին և մահվանն ուղղված: Եթե խաչելությունը ինքնազոհաբերվող սերն է խորհրդանշում, ապա հարությամբ այդ սիրո հավիտենական և կենսատու պտուղներն ենք տեսնում:

Սիրո գաղափարն Աստվածաշնչում այնքան է կարևորվում, որ ուղղակի համընդհանրացվում ու հռչակվում է. «Աստուած սէր է» (Ա Յովի. 4:8): Օգոստինոս Երանելին գրում է. «Եթե թղթի մեջ, անգամ ողջ Սուրբ Գրքում ոչինչ գրված չլիներ սիրո մասին, և մենք Հոգու բերանից լսած լինեինք միայն «Աստված սեր է» արտահայտությունը, այլ բանի կարիք չէինք ունենա»:

Այսպիսով՝ սերն Աստծո ամենաուղղակի բնորոշումներից մեկն է Աստվածաշնչում: Սիրո սկզբունքն է իշխում մարդու արարչության, կյանքի շարունակականության և փրկության հիմքում: Համաձայն Սուրբ Գրքի՝ մարդկանց ոչինչ առավել պետք չէ, քան սերը միմյանց հանդեպ, սերը՝ որպես զգացմունք և գործողություն:

Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ
Էդվարդ սրկ. ՔԵՇԻՇՅԱՆ

Ռեմբրանդտ, Աբրահամ և Իսահակ, 1635 թ.

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Ծննդյան թեմատիկ արձարձումները համաշխարհային գրականության մեջ

Սուրբ Ծննդյան գեղարվեստական արձարձումները, համաշխարհային գրականության մեջ պարզ պատմություններից զատվելով, աստիճանաբար միտվում են դեպի ժամանակի լարվածությունը՝ ձեռք բերելով խոհափիլիսոփայական ենթախորքեր:

Նախ՝ դրանք պատմություններ են, որոնք առաջացնում են միայն Սուրբ Ծննդյան տրամադրություն՝ ձյան փաթիլների, սահնակների, եղջերուների, նվերների պարկերի, Ձմեռ պապի և ձմեռային զանգի պատկերներով: Բոլոր փայլերով հանդերձ, որ տարածում են նման պատմությունները, դրանք այսօր այլևս արդիական չեն:

Հաճախ էլ ներկայացվում են փոքրիկ նվերի պատճառած ուրախությունը կամ եկեղեցի այցելելը՝ որպես տոնի կարևորագույն պահ: Իդեալականացված հիշողությունը բացահայտում է տոնն իմաստավորելու և այն իսկապես խորը զգալու այսօրվա անկարողությունը:

Այսպես կոչվող «դարձի գալու բարոյականացնող պատմությունները» կամ «փրկության խորհրդանշային պատմությունները», որոնք հիմնականում հանդիպում են հին գրականության մեջ, արտահայտում են մի կողմից՝ Սուրբ Ծննդյան ոգու լույսի ներքո անցում խստությունից դեպի ողորմություն, մյուս կողմից՝ Սուրբ Ծննդյան իրադարձությունների հետ կապված՝ աղետներից փրկվելու հրաշքներ: Նման պատմություններում կիրառվում են նաև կերպափոխություններ, որոնցում կամ ժամանակակից մարդիկ ընդունում են ծննդյան պատմություններում ներգրավված կերպարների հատկությունները, կամ մանուկ Հիսուսը տեղափոխվում է այլ ժամանակներ:

Բացի այդ՝ կան ստեղծագործություններ, որ գրված են առավելապես որպես խորհրդածություններ՝ արտահայտելով Սուրբ Ծննդյան վերաբերյալ ժամանակակից մտքեր: Նման երկերը կարելի է համարել քրիստոնեական ինքնագիտակցման փորձեր:

19-րդ դարում եվրոպական գրականության մեջ ձևավորվում է «Սուրբ Ծննդյան պատմվածք» ժանրային բնորոշումը, որի հիմնադիրը համաշխարհային գրականության մեջ դարձավ Չարլզ Դիքենսը՝ իր «Սուրբ Ծննդյան երգը» հեքիաթային պատմությամբ: Այն Ծննդյան ամենահայտնի ստեղծագործություններից է Բրիտանիայում և նրա սահմաններից դուրս: Պատմվածքը Էբենեզեր Սքրուջ անունով մի ծեր, քարսիրտ և ժլատ մարդու մասին է, որը հոգեպես փոխվում է՝ Ծննդյան նախօրեին իրեն այցելած Սուրբ Ծննդի Անցյալի, Ներկայի և Ապագային ոգիների հետ հանդիպումից հետո:

Այս ժանրի սրտառուչ գործերից է նաև Հանս Քրիստիան Անդերսենի «Լուցկիներով աղջիկը»:

Ցանկացած Սուրբ Ծննդյան պատմվածքում պարտադիր տեղի են ունենում հրաշք և հերոսի վերածնունդ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1946–1947 թթ. սովի ժամանակներում, լույս է տեսնում գերմանացի գրող Վոլֆգանգ Բորխերտի «Երեք ծպտյալ արքաները» պատմվածքը: Այն հեղինակի ամենահայտնի ստեղծագործություններից է, Սուրբ Ծննդյան գրականության բնորոշ օրինակ, որ լայնորեն տպագրվել է ընթերցանության ժողովածուներում և մեկնաբանվել դպրոցական դասերին: Դա լույսի և խավարի մի խաղ է, որ Վոլֆգանգ Բորխերտը ներկայացնում է իր ընթերցողներին:

Պատմությունը լցված է երկիմաստ տրամադրություններով: Հետպատերազմյան մռայլությունն ու ցուրտը հակադրվում են ընտանիքի ջերմությանն ու հարմարավետությանը: Սուրբ Ծննդյան գիշերը երեք զինվորների ժամանումը բերում է անսպասելի ուրախություն և մտահոգությունների կարճ ընդմիջում: Տրամադրությունը փոխվում է հուսահատությունից հույսի, վախից՝ մխիթարության: Իրերը պարունակում են ժամանակաշրջանի մարդկային ցավի ու տառապանքի զգացողությունները: Գլխավոր գաղափարներն են լույսը՝ որպես հույսի խորհրդանիշ, և ցուրտը՝ որպես աղետի:

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վոլֆգանգ Բորխերտ

Երեք ծպտյալ արքաներ

Նա խարխափում էր արվարձանի մթության մեջ: Երկնքին դեմ հանդիման ցցվել էին ավերակները: Լուսինը չկար, իսկ ճամփան սարսափած էր ուշ ոտնաքայլից: Հետո նա գտավ մի հին տախտակ, ոտքով խփեց դրան, մինչև որ մի երկար անկյունային փտած կտոր հառաչեց և դուրս թռավ: Փայտից արձակվեց թթու ու քաղցր բույր: Մութ արվարձանով նա խարխափելով հետ գնաց: Աստղեր չկային:

Երբ նա բացեց դուռը (իսկ այն՝ դուռը, դրանից լացեց), կնոջ բաց կապույտ հոգնած աչքերը դեմքից իրեն էին նայում, և սենյակում այնքան ցուրտ էր, որ շունչը սպիտակ մնացել էր օդում կախված: Նա ծալեց իր ոսկրոտ ծունկը և ջարդեց փայտը: Փայտը հառաչեց: Չորս կողմից բուրում էր թթու ու քաղցր: Դրանից մի կտոր պահեց քթի տակ:

— Բուրում է կարկանդակի նման,— նա ցածր ծիծաղեց:

«Մի՛ ծիծաղիր,— ասացին կնոջ աչքերը,— մի՛ ծիծաղիր: Նա քնած է»:

Տղամարդը թիթեղյա փոքրիկ վառարանի մեջ նետեց փտած քաղցր փայտը: Այն բռնկվեց և մի բուռ տաք լույս նետեց սենյակ: Փոքրիկ, կլոր դեմքի վրա ընկնելով՝ մի պահ մնաց: Փոքրիկն ընդամենը մեկ ժամ առաջ էր լույս աշխարհ եկել, բայց արդեն ուներ այն ամենը, ինչ անհրաժեշտ էր՝ ականջներ, քիթ, բերան և աչքեր: Աչքերը խոշոր կլինեն. դա տեսանելի էր, չնայած հիմա էլ չափազանց մեծ են: Բայց բերանը բաց էր, և նա շնչում էր: Քիթն ու ականջները կարմիր էին: «Նա ողջ է»,— մտածեց մայրը: Եվ փոքրիկ դեմքը քնած էր:

— Այստեղ դեռ վարսակի ալյուր կա,— ասաց տղամարդը:

— Այո՛,— պատասխանեց կինը:

— Դա լավ է:

Ցուրտ է: Տղամարդը ավելացրեց քաղցր փափուկ փայտից. նա հենց նոր է երեխա ծնել և, հավանաբար, սառել է: Բայց չկար մեկը, որի դեմքին բռունցքներով հարվածեր դրա համար: Երբ կրկին բացեց վառարանի դուռը, մի բուռ լույս նորից ընկավ քնած փոքրիկի վրա: Կինը կամաց ասաց.

— Նայի՛ր, տես, իսկական հրեշտակ է՝ լուսապսակով:

«Հրեշտակ»,— մտածեց նա, ու չկար մեկը, որի դեմքին բռունցքներով հարվածներ տար:

Դռան մոտ մարդիկ հայտնվեցին: Նրանք ասացին, որ տեսել էին պատուհանի լույսը և ուզում են տասը րոպե նստել:

— Բայց տանը երեխա կա,— ասաց տղամարդը:

Նրանք չպատասխանեցին, բայց այնուամենայնիվ մտան սենյակ, քթով դուրս մղեցին ծուխը և թաթերի վրա առաջ եկան.

— Մենք շատ կամաց ենք,— շշնջացին:

Լույսն ընկավ նրանց վրա: Երեքով էին: Երեքն էլ՝ հին համազգեստով: Մեկը ստվարաթղթե տուփ ուներ, մյուսը՝ պարկ, իսկ երրորդը ձեռքեր չուներ:

— Սառել ենք,— ասաց նա՝ բարձրացնելով թևերը: Հետո վերարկուի գրպանն ուղղեց դեպի տանտերը: Այնտեղից հանեցին տաբակ և բարակ թուղթ: Նրանք ծխախոտ փաթաթեցին, բայց կինն ասաց՝ պետք չէ, երեխա կա:

Հետո չորսն էլ դուրս եկան դռնից, և նրանց ծխախոտերը գիշերվա մեջ կետեր էին երևում: Մեկն ուներ լաթերով փաթաթված հաստ ոտքեր: Նա պարկից հանեց մի փորագրված փայտի կտոր:

— Ավանակ է,— ասաց նա:— Ես այն յոթ ամիս փորագրել եմ: Երեխայի համար է:— Այս խոսքերի հետ այն տվեց տղամարդուն:

— Ինչ է եղել ոտքերիդ,— հարցրեց մարդը:

— Ջրգողություն,— ասաց ավանակ փորագրողը,— սովածությունից է:

— Իսկ մյո՞ւսը՝ երրորդը,— հարցրեց տղամարդը՝ մթության մեջ շոշափելով փայտե էշը:

Երրորդը դողում էր համազգեստի մեջ:

— Օ՜, ոչի՛նչ,— շշնջաց նա,— նյարդերից է: Պարզապես չափազանց շատ էր վախեցել:

Հետո նրանք ոտքերի տակ ճմռեցին ծխախոտի մնացորդը և նորից ներս մտան: Թաթերի վրա առաջ եկան ու նայեցին քնած փոքրիկ դեմքին: Դողացողն ստվարաթղթե տուփից հանեց երկու դեղին կոնֆետ ու ասաց.

— Կնոջ համար են սրանք:

Կինը լայն բացեց բաց կապույտ աչքերը, երբ տեսավ երեք մութ կերպարանք՝ երեխայի վրա խոնարհված: Նա վախեցավ: Բայց հանկարծ երեխան ոտքերը սեղմեց նրանց կրծքին և այնքան ուժեղ բղավեց, որ երեքն էլ կանգնեցին և սահեցին դեպի դուռը: Այստեղ նրանք նորից գլխով արեցին, իսկ հետո ելան դուրս՝ դեպի գիշերը:

Մարդը նայեց նրանց հետևից ու դիմեց կնոջը.

— Տարօրինակ սրբեր:

Հետո նա փակեց դուռը: «Փառահեղ սրբեր»,— փնթփնթաց նա՝ հայացքը գցելով վարսակի ալյուրին: Սակայն բռունցքելու դեմք չկար:

— Բայց երեխան բղավեց նախքան նրանց գնալը,— շշնջաց կինը,— նա շատ ուժեղ բղավեց: Տես, ինչ աշխույժ է,— հպարտությամբ ասաց նա:

Փոքրիկը բացեց բերանը և բղավեց:

— Նա լա՞ց է լինում,— հարցրեց մարդը:

— Ո՛չ, կարծում եմ՝ ծիծաղում է,— պատասխանեց կինը:

— Իսկ և իսկ կարկանդակ,— ասաց տղամարդը և հոտ քաշեց փայտից: Կարկանդակի հոտ էր գալիս: Շա՛տ քաղցր:

— Այսօր նաև Սուրբ Ծնունդ է,— ասաց կինը:

— Այո՛, Սուրբ Ծնունդ,— քթի տակ կրկնեց ամուսինը, իսկ վառարանից մի բուռ լույս ընկած էր քնած փոքրիկ դեմքին:

Գերմաներենից թարգմանությունը՝
Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, բ. գ. թ.

Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն

↩ էջ 5

Այսպիսով՝ այս ընծաներն ընդգծում են Հիսուսի երեք կարևոր դերերը՝ Թագավոր, Աստված և Մարդ, Որ պիտի տառապի և մահանա հանուն փրկության:

Սուրբ Ծնունդը պարզապես պատմական դեպքի գեղեցիկ նկարագրություն չէ: Սա հիշեցնում է, որ Աստված, Արարիչ լինելով, ոչ միայն ստեղծեց աշխարհը, այլև սեր ու փրկություն բերեց մարդկությանը: Սկզբում Նա ստեղծեց Ադամին ու Եվային, բայց նրանք հեռացան Աստծուց՝ մեղք գործելով: Աստված, սակայն, այնքան սիրեց Իր արարչությունը, որ վերստին ներեց մարդկանց՝ պարգևելով Իր Որդուն: Հիսուս Քրիստոսի Ծնունդը Աստծու և մարդկանց միջև առաջացած պատնեշը քանդելու և հաշտություն գտնելու սկիզբն էր:

Հայ Եկեղեցին Սուրբ Ծնունդը միշտ նշել է հունվարի 6-ին՝ հետևելով սրբազան ավանդությանը, ինչպես նաև հաշվարկն սկսելով ավետման օրից: Սկզբնական շրջանում այդպես էր ամբողջ աշխարհում, բայց չորրորդ դարից հետո Կաթոլիկ Եկեղեցին Հիսուսի Ծնունդն սկսեց նշել դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին: Իրականում այս որոշումն ուներ իր տրամաբանական հիմնավորումը: Չորրորդ դարում դեռ հեթանոսական որոշ տոներ կային, որոնք մնացել էին Հռոմում: Մասնավորապես արևի աստվածությանը՝ Միթրային նվիրված տոնը, որ նշվում էր դեկտեմբերի 25-ին: Այդ օրը քրմերը մեծ խարույկներ էին վառում, և ժողովրդական տոնակատարություններ էին լինում: Այսօրվա Վատիկանի տեղում այս աստվածությանը նվիրված ահռելի տաճար կար, և դրա փոխարեն Սուրբ Պետրոսի տաճարի կառուցումից հետո էլ հեթանոսական տոնի հանդեպ հետաքրքրությունն այդպես էլ չդադարեց: Այդ պատճառով Կաթոլիկ Եկեղեցին այդ ժամանակի համար տրամաբանական որոշում ընդունեց՝ Սուրբ Ծննդյան տոնը նշել դեկտեմբերի 25-ին:

Իսկ ինչի՞ համար հենց հունվարի 6-ը՝ որպես Սուրբ Ծննդյան տոնի օր: Բացի նախաքրիստոնեական ժամանակներից եկող եկեղեցական ավանդույթից՝ նաև կան որոշակի տոմարական տրամաբանական հաշվարկներ: Եթե կարդանք Ղուկաս ավետարանչի առաջին գլխի 23–24 համարները, կտեսնենք, որ Զաքարիան ավարտեց իր ծառայությունը տաճարում և վերադարձավ տուն, որից հետո հղիացավ նրա կինը՝ Եղիսաբեթը: Այսպիսով՝ Զաքարիան 12 օր (5 օր Քավության և 7 օր Տաղավարահարաց տոներին) տաճարում սպասավորեց Քավության տոնին, որի սկիզբը սեպտեմբերի 27-ն էր: Զաքարիայի՝ տուն վերադարձի և Եղիսաբեթի հղիանալու ժամանակը հոկտեմբերի 9/10-ն էր: Այս դեպքից 6 ամիս հետո՝ ապրիլի 7-ին, եղավ Սուրբ Կույսի ավետումը, իսկ Սուրբ Ծնունդը տեղի ունեցավ 9 ամիս անց՝ հոնվարի 6-ին: Միևնույն ժամանակ Եկեղեցու հայրերը, հենվելով Հիսուսի մկրտությունից հետո ավետարանչի խոսքերի վրա՝ «Եվ Ինքը՝ Հիսուսը, շուրջ երեսուն տարեկան էր, երբ սկսեց Իր գործը» (Ղուկաս 3:23), Տիրոջ մկրտության տոնը նշում են Սուրբ Ծնունդի հետ՝ միևնույն օրը:

Սուրբ Ծնունդի նախորդ օրը կոչվում է ճրագալույց, որ նշանակում է ճրագ վառել: Նախկինում ընդունված էր տոնին ընդառաջ եկեղեցու ճրագները վառել, ինչի համար հավատացյալներին մոմեր էին բաժանվում, և վառվող մոմերով միասին շրջում էին տնետուն՝ ավետիս երգելով: Հետագայում այս սովորույթը վերածվում է եկեղեցուց լույս տանելու ժողովրդական գեղեցիկ արարողության: Հաջորդ օրը՝ հունվարի 6-ին, բոլոր եկեղեցիներում կատարվում է Սուրբ Ծննդյան հանդիսավոր պատարագ, իսկ պատարագի ավարտին հոգևորականները կատարում են ջուր օրհնելու կարգը: Սա Քրիստոսի՝ Հորդանան գետում մկրտվելու խորհրդանիշն է:

Ուղղափառ Եկեղեցիներում ընդունված է՝ այդ օրը եկեղեցուց մեծ և հանդիսավոր թափորով գնալ մոտակա գետ կամ լիճ և այնտեղ անցկացնել արարողությունը, որի ժամանակ խաչը գցում են ջրի մեջ, իսկ ով առաջինն է

Սանդրո Բոտիչելլի, Մարիամը Երեխայով և երգող հրեշտակներով, 1487 թ.

հանում ջրից, խաչի կնքահայրն է: Մեր Եկեղեցում ջրօրհնեքի ժամանակ քահանաները ջուրը երեք անգամ օրհնում են խաչով, իսկ հետո սրբալույս մյուռոն են կաթեցնում մեջը: Դրանից հետո հավատացյալներն այն տանում են իրենց տները և որպես օրհնություն՝ օգտագործում սննդի հետ: Հետաքրքիր սովորույթ կա նաև Սուրբ Ծնունդի տոնակատարությունների ընթացքում և հաջորդող օրերին. մարդիկ քահանաներին հրավիրում են իրենց տները՝ տնօրհնեք կատարելու համար:

Լիանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայիս սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ապաշխարության խորհուրդը Հովնանի մարգարեության մեջ

Հին Կտակարանի տասներկու փոքր մարգարեներից է Հովնան մարգարեն, որի հիշատակությունը Հայոց Եկեղեցում նշվում է Առաջավորաց պահքի 5-րդ՝ ուրբաթ օրը: Խորհուրդն այն է, որ ճշմարիտ ապաշխարությամբ, մեղքերի գիտակցմամբ և թողությամբ կարելի է արժանանալ Աստծո ողորմությանը:

«Հովնան» բառը ծագել է եբրայերեն «յոնա» բառից և նշանակում է աղավնի: Մարգարեության հենց սկզբում նշվում է, որ նա Ամաթի որդին է: Հին Կտակարանի չորրորդ Թագավորաց գրքում ևս հիշատակություն կա Ամաթի որդի Հովնան անունով մեկի մասին. «Նա Իսրայէլի սահմանները՝ Եմաթի մուտքից մինչև Արաբա ծովը, ապահով դարձրեց, ինչպես իր ծառա գեթաքոբերացի Ամաթի որդի Հովնան մարգարեի միջոցով ասել էր Տեր Աստվածը» (Դ Թագ. 14:25): Սրանից կարող ենք ենթադրել, որ խոսքը նույն Հովնանի մասին է, սակայն անվերապահորեն վստահ լինել չենք կարող, քանի որ մինչև օրս այս հարցը լիովին պարզաբանված չէ:

Հովնանի գիրքը բաղկացած է չորս գլխից, որոնց ընդհանուր թեման ապաշխարությունն ու Աստծո ողորմածությունն է: Աստծու կողմից Հովնան մարգարեն առաքելություն է ստանում՝ կործանումից փրկելու հեթանոս Նինվեն և նրա՝ մեղքերի մեջ խրված բնակչությանը: Տերը պատգամում է Հովնանին. «Ելիր և գնա Նինվե մեծ քաղաքը և քարոզիր այնտեղ, քանի որ նրա չարության համբավը հասավ ինձ» (Հովն. 1:1): Սակայն Հովնանը չի ցանկանում կատարել Աստծո կամքը և որոշում է նավով փախչել Թարսիս (այժմ գտնվում է Իսպանիայի տարածքում)՝ Տիրոջ ներկայությունից հեռու, որովհետև մտածում է, որ Աստված ողորմած է և Իր սպառնալիքը չի իրագործի, եթե նինվեացիները հավատան ու ապաշխարեն: Նավագնացության ժամանակ ծովում հուժկու փոթորիկ է բարձրանում, և նավը խորտակման վտանգի առջև է հայտնվում: Նավում բոլորն աղոթում են իրենց աստվածներին՝ փրկություն խնդրելով, մինչդեռ Հովնանը հանգիստ ննջում է մի խորշում: Այդ ժամանակ բոլորը որոշում են վիճակ գցել՝ հասկանալու՝ ում պատճառով են փորձության մեջ հայտնվել: Վիճակն ընկնում է Հովնանին, և նրան ասում են. «Պատմիր մեզ, թե ինչն է այս չարիքների պատճառը. ինչ գործ ես անում, որտեղից ես գալիս և ուր ես գնում, որ երկրից ես կամ որ ժողովրդից»: Հովնանը պատասխանում է. «Ես Տիրոջ ծառան եմ, պաշտում եմ երկնքի Տեր Աստծուն, որն ստեղծեց ծովն ու ցամաքը», և պատմում է եղելությունը: Մարդիկ վախեցած բացականչում են. «Այդ ի՞նչ ես արել.... Ի՞նչ անենք քեզ, որ ծովը մեզ հանգիստ թողնի»: Հովնանն ասում է նրանց. «Ինձ ծովը գցեցե՛ք, և ծովը կխաղաղվի, որովհետև ես գիտեմ, որ ի՛մ պատճառով է այս փոթորիկը

ձեզ վրա հասել» (Հովն. 1:7–12): Ծովն ավելի ու ավելի էր ալեկոծվում, և մարդիկ նավը չէին կարողանում ափ վերադարձնել, ուստի Հովնանին ծովն են գցում, և այն անմիջապես խաղաղվում է: Աստծո հրամանով Հովնանին ծովում մի կետ ձուկ կուլ է տալիս: Նա երեք ցերեկ և երեք գիշեր մնում է ձկան մեջ և անդադար աղոթում Տեր Աստծուն.

«Իմ նեղության մեջ ես աղոթեցի իմ Տեր Աստծուն,
և Նա լսեց իմ աղաչանքը դժոխքի խորքից:
Տե՛ր, լսի՛ր իմ ձայնը:
Ինձ գցեցիր ծովի խորքերը,
և ջրի հոսանքները պաշարեցին ինձ:
Քո կոհակներն ու ալիքները թափվեցին ինձ վրա,
և ես մտածեցի, թե մերժվել եմ քո ներկայությունից.
արդյոք նորից պիտի տեսնե՞մ Քո սուրբ տաճարը:
Ջրերը թափվեցին ինձ վրա շունչս կտրելու աստիճան:
Խորունկ անդունդներ պաշարեցին ինձ:
Գլուխս մտավ լեռների փապարների մեջ,
Իջա մի երկիր, որի նիգերը փակ են հավիտյան:
Ես կփրկվեմ ապականությունից....» (Հովն. 2:3–7):

Երեք օր անց կետ ձուկը Հովնանին ցամաք է նետում: Աստված փրկում է նրան՝ նախկին պատգամը կատարելու պայմանով, և նա ճանապարհ է ընկնում Նինվե: Երբ հասնում է այնտեղ, ասում է. «Եվս երեք օր, և Նինվեն պիտի կործանվի» (Հովն. 3:4): Երբ հեթանոս նինվեացիները լսում են Աստծո պատգամը, հավատում են, զղջում և փորձում շտկել իրենց սխալները. «Նինվեացի մարդիկ հավատացին Աստծու պատգամին, պահեցողություն հայտարարեցին և մեծից մինչև փոքրը քուրձ հագան: Լուրը հասավ նինվացիների թագավորին: Սա ելավ իր գահից, հանեց իր պատմուճանը, քուրձ հագավ և նստեց մոխրի վրա: Թագավորի ու նրա մեծամեծների կողմից Նինվեում հայտարարվեց ու ազդարարվեց, թե մարդ և անասուն, հոտ և արջառ թող ոչինչ չուտեն, չճարակեն և ջուր չխմեն: Եվ մարդ ու անասուն քուրձ հագան, ի սրտե աղոթեցին Աստծուն, բոլորը հետ կանգնեցին իրենց չար ճանապարհներից և անօրենություններից, որ իրենց ձեռքով էր կատարվում, և ասացին. «Ով գիտե, թերևս Աստված միտքը փոխի և հետ կանգնի իր խիստ բարկությունից, և կորստի չմատնվենք»: Եվ Աստված տեսավ նրանց գործերը, քանի որ բոլորը հետ էին կանգնել իրենց չար ճանապարհներից. Աստված զղջաց այն չարիքների համար, որ ասել էր, թե կանի նրանց. և չարեց» (Հովն. 3:5–10):

Այսպես՝ Աստված ապաշխարության ուղին բռնած նինվեացիներին փրկում է և չի իրագործում մարգարեությունը: Սակայն դրանից շատ վրդովվում է Հովնանը և ասում, որ ինքը գիտեր Աստծո ողորմության և գթասրտության մասին, այդ պատճառով էլ փախավ և չցանկացավ կատարել Նրա կամքը: Հովնանը դուրս է գալիս քաղաքից, իր համար պատրաստում ամպհովանի և նստում այնտեղ, որ տեսնի՝ ինչ է լինելու քաղաքի հետ: Աստված իմաստուն խորհուրդով Հովնանին հասկացնում է, թե որքան թանկ է Իր համար յուրաքանչյուր մարդ, և որ Իր կամքն է բոլոր մեղավորների դարձն ու փրկությունը: Եվ Նա Հովնանի համար դդմենի է աճեցնում, որ արևից պաշտպանի, որից վերջինս շատ է ուրախանում: Սակայն հաջորդ օրն Աստված հրամայում է որդին, որ դդմենին ուտի, և այն չորանում է, իսկ արևն ընկնում է Հովնանի գլխին: Դրանից Հովնանը տխրում է, բայց առավել մռայլվում է, որ բարեգութ Աստված ներում է, և Նինվեն չի կործանվում: Աստծո պատասխանը այսպիսին է լինում Հովնանի դժգոհությանը. «Դու ափսոսացիր դդմենուն, որի համար ոչ մի ջանք չթափեցիր, չսնեցիր այն. նա գիշերը բուսնեց և մյուս գիշեր կորավ: Իսկ ես չխնայե՞մ Նինվե մեծ քաղաքին, որտեղ ապրում են ավելի քան հարյուր քսան հազար մարդ, որոնք իրենց լավն ու վատը չիմացան, ինչպես նաև շատ կենդանիներ» (Հովն. 3:10–11):

Աստվածային մեծահոգությանն ու բարեգթությանը հակադրվում են Հովնանի փոքրոգությունն ու մեծամտությունը, որ կարծում է՝ բացի ընտրյալ ազգից՝ իսրայելցիներից, ոչ ոք Աստծո խոսքը լսելու իրավունք չունի:

Աստծո գթասրտությունն անչափ է, Նա լի է կատարյալ սիրով և անսահման բարությամբ Իր արարածների հանդեպ և ներում է բոլորին, եթե ի սրտե ապաշխարեն, «որովհետև մարդը հավատով է արդարանում առանց օրենքի գործերի, քանզի Աստված մեկն է և՛ հրեաների, և՛ հեթանոսների համար, և Նա է, ով կարող է արդարացնել երկուսին էլ, հարկավոր է միայն հավատ ունենալ» (Հռոմ. 3:28–30):

Հովնանի գիրքը մյուս մարգարեական գրքերից տարբերվում է նրանով, որ պատմում է ոչ թե մարգարեության, այլ մարգարեի կյանքի մի դրվագի մասին:

Տարակարծություններ կան Հովնան մարգարեի ապրած դարաշրջանի վերաբերյալ: Եթե հետևենք Թագավորաց գրքին, կեզրահանգենք, որ Հովնանը գործել է 8-րդ դարում և եղել Ամովս մարգարեի ժամանակակիցը, մինչդեռ Հովնանի գրքում նշվում է, որ նա գործել է Նինվեի նվաճումից և բաբելոնացիների կողմից Ք. ա. 612 թ. ասորական պետության բնաջնջումից մի փոքր առաջ՝ մոտավորապես Ք. ա. 5-րդ դարում:

Նոր Կտակարանում Հովնան մարգարեի մասին հիշատակվում է միայն մեկ անգամ. «Այն ժամանակ օրենսգետներից և փարիսեցիներից ոմանք Նրան (Հիսուսին) պատասխան տվեցին ու ասացին. «Վարդապե՛տ, Քեզնից մի նշան ենք կամենում տեսնել»: Նա պատասխան տվեց նրանց ու ասաց. «Չար և շնացող ազգը նշան է փնտրում. այլ նշան չի տրվի նրան, բայց միայն *Հովնան մարգարեի նշանը*. որովհետև, ինչպես Հովնանը երեք օր ու երեք գիշեր կետի փորի մեջ էր, նույնպես և մարդու Որդին երկրի ընդերքում՝ երեք օր ու երեք գիշեր» (Մարկ. 12:38–40):

Այսպես՝ Քրիստոս հանդիմանում է փարիսեցիներին նինվեացիների ապաշխարության օրինակով, իսկ Իր երեքօրյա հանգչելը գերեզմանում կոչում է «Հովնանի նշան»՝ կետի փորից մարգարեի ազատվելու հրաշքը ներկայացնելով որպես կյանքի և մահվան վրա Իր իշխանության խորհրդանիշ (Ղուկ. 11.29–32):

Ամփոփելով վերոնշյալը՝ պարզապես պետք է հիշենք, որ Աստծու սերը անսահման է մեղավորներիս հանդեպ, և «Նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա» (Մատթ. 5:45):

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջավորաց պահք

Առաջավորաց պահքը Հայոց Եկեղեցու առաջին պահքն է, և այն հատուկ է միայն Հայ Եկեղեցուն: Առաջավորաց պահքն սկսվում է Մեծ պահքից երեք շաբաթ առաջ և տևում հինգ օր՝ երկուշաբթիից ուրբաթ: Այս պահքը հաստատել է մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ Խոր Վիրապում տասներեք տարի բանտարկությունից դուրս գալուց հետո: Երբ Սուրբ Հայրապետը դուրս եկավ բանտից, վաթսունհինգ օր ու գիշեր քարոզեց, իսկ մկրտությունից առաջ պատվիրեց Տրդատ Գ արքային, արքունի անդամներին և ժողովրդին՝ պահք պահել: Քանի որ այս պահքն առաջինը եղավ Հայոց Եկեղեցում, ուստի կոչվեց Առաջավորաց և համարվեց մեր Եկեղեցու առաջին ազգային պահքը:

Եկեղեցու հայրերն այս պահքն Առաջավորաց կոչելու համար այլ պատճառ են նաև նշում: Դրանցից մեկի համաձայն՝ երբ Ադամն ու Եվան դրախտից արտաքսվեցին և կորցրին Աստծո ներկայությունը՝ ապրելով միայնության դառն զգացումը, նրանք պահքով և արտասուքներով հինգ օր շարունակ սգում էին դրախտի դռների առաջ՝ Աստծո ներկայությունից և Նրա հետ ուղղակի հաղորդակցությունից զրկվելու համար: Դա մարդկության պատմության առաջին պահքն էր, որի հիմքի վրա էլ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հաստատել է Հայոց Եկեղեցու առաջին պահքը: Քանի որ Առաջավորաց պահքին հաջորդում է Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների տոնը, հաճախ թյուրիմացաբար այս պահքն անվանում են Սուրբ Սարգսի պահք: Հարկ է նշել, որ Հայոց Եկեղեցում սրբերի տոների համար պահք սահմանված չէ, հետևաբար՝ Սուրբ Սարգսի տոնը չի կարող պահք ունենալ:

Տոնացույցում Առաջավորաց պահքի չորս օրերի համար սուրբգրային ընթերցվածներ չկան, և պատարագ չի մատուցվում, քանի որ այս պահքի մեջ խորհրդանշաբար մեր նախահոր և նախամոր՝ Ադամի ու Եվայի անկումն է հիշատակվում, որոնք ապրել են նախքան Սուրբ Գրքի գրվելը, դրա համար էլ ընթերցվածներ չկան:

Առաջավորաց պահքի հինգերորդ՝ ուրբաթ օրը Հովնան մարգարեի հիշատակության օրն է, և այդ օրն ընթերցվում է նրա մարգարեությունը, որտեղ խոսվում է պահքի ու ապաշխարության մասին: Հովնան մարգարեն Աստծո հրամանով գնում է Նինվե՝ քարոզելու, և նրա քարոզի արդյունքը եղավ ժողովրդի ապաշխարությունը. «Նինվեացի մարդիկ հավատացին Աստծու պատգամին, պահեցողություն հայտարարեցին և մեծից մինչև փոքր քուրձ հագան: Լուրը հասավ նինվեացիների թագավորին: Սա ելավ իր գահից, հանեց իր պատմուճանը, քուրձ հագավ և նստեց մոխրի վրա» (Հովն. 3:5–6): Այս ամենի արդյունքը եղավ, որ Աստված տեսնելով՝ նրանք հետ են կանգնել իրենց չար ճանապարհից, «զղջաց այն չարիքների համար, որ ասել էր, թե կանի նրանց, և չարեց» (Հովն. 3:10:)

Առաջավորաց պահքը և առհասարակ բոլոր պահքերն ինքնաքննության և ապաշխարության հնարավորություն են մեզ ընձեռում: Սուրբ Հովհան Մանդակունին պահք պահելու մի քանի կետեր նշելուց հետո՝ սակավ ուտել, խմել, քնել և անդադար աղոթել, մատնանշում է իրական պահեցողության կերպը. «Մանավանդ հարկ է, որ պահքի օրերին որովայնիցդ զրկելով՝ աղքատներին տաս այն, որպեսզի դու քաղցես, իսկ քաղցողը կշտանա, և քո մեղքը քավվի»:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 17.01.2025 թ.
Տպաքանակը՝ 1265